

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան

30 հոկտեմբերի 2020թ.

Մասնակիցների ցուցակ՝

- | | |
|------------------------|-----------------------|
| 1. Անդրանիկ Ալեքսանյան | 6. Լիաննա Գալստյան |
| 2. Աննա Կարախանյան | 7. Միսակ Խաչատրյան |
| 3. Արամ Վերդյան | 8. Միրանուշ Վարդանյան |
| 4. Արման Ներսիսյան | 9. Քրիստինա Հակոբյան |
| 5. Իգոր Մկրտումյան | 10. Քրիստինե Գյոնջյան |

Նիստին ներկա էր նաև կազմակերպության անդամ Նարինե Դերձակյանը:

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Քրիստինա Հակոբյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգի վերաբերյալ հնչեցին առաջարկություններ: Արդյունքում, հաստատվեց հետևյալ օրակարգը.

Օրակարգ՝

1. Դոմենային անունների վեճերի լուծումն իրականացնող արբիտրաժի ընտրությանը հավանություն տալու մասին:
2. Գումար հատկացնելու մասին:
3. Դոմենային անունների համակարգի (DNS) սերվերների սարքավորումների արդիականացման մասին:

1. Դոմենային անունների վեճերի լուծումն իրականացնող արբիտրաժի ընտրությանը հավանություն տալու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցան պարոն Իգոր Մկրտումյանը, ով իր խոսքում հիմնավորեց «.am» և «.hay» դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների վեճերի լուծումն իրականացնող արբիտրաժի փոփոխման անհրաժեշտությունը և պարոն Անդրանիկ Ալեքսանյանը, ով ներկայացրեց տեղեկություններ «Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատություն» հիմնարկի վերաբերյալ:

Ելույթների ավարտից հետո խորհրդի անդամների կողմից տրվեցին հարցեր նշված արբիտրաժի ֆինանսավորման, համագործակցելու եղանակների, արբիտրների մասնագիտական որակավորման, արբիտրաժի փոփոխությամբ պայմանավորված՝ ռեգիստր-ռեգիստրար, ռեգիստրար-գրանցող փոխհարաբերությունների և այլնի վերաբերյալ:

Համապատասխան պարզաբանումներ ստանալուց հետո, քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը ձայների 8 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ որոշեց՝

Որոշում՝ *Հավանություն տալ «.am» և «.hայ» դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների վեճերի լուծումն իրականացնող արբիտրաժի ընտրությանը:*

2. **Գումար հատկացնելու մասին:**

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Արման Ներսիսյանը՝ առաջարկելով 2021 թվականի ընթացքում գումար հատկացնել համահայկական հիմնադրամին և (կամ) բանակաշինության զարգացմանն ուղղված ծրագրերին: Ելույթ ունեցողը նշեց նաև այն աղբյուրները, որտեղից, ըստ նրա, կարելի է հատկացնել գումարներ:

Ելույթի ավարտից հետո ծավալվեց քննարկում: Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը միաձայն որոշեց՝

- Որոշում՝ *2021 թվականի ընթացքում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի կողմից որոշված հիմնադրամներին կամ ծրագրերին հատկացնել գումարներ հետևյալ աղբյուրներից՝*
- 1) «.hայ» դոմենային անունների տիրույթում գրանցված դոմենային անուններից ստացված հասույթից,*
 - 2) «.am» դոմենային անունների տիրույթում գրանցված դոմենային անուններից ստացված հասույթից (նվազագույնը 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ),*
 - 3) «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամների կողմից վճարվող անդամավճարներից:*

3. **Դոմենային անունների համակարգի (DNS) սերվերների սարքավորումների արդիականացման մասին**


Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Միսակ Խաչատրյանը՝ ներկայացնելով արդիականացման ենթակա դոմենային անունների համակարգի (DNS) սերվերների սարքավորումների ցանկը և գինը:

Ելույթի ավարտից հետո ծավալվեց քննարկում: Քննարկման արդյունքում, որպես «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի մասնակիցների ընդհանուր ժողովի լիազորություններն իրականացնող, կազմակերպության խորհուրդը միաձայն որոշեց՝

Որոշում՝ *Հանձնարարել «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արման Ներսիսյանին՝ ընկերության 2021 թվականի ծախսերի նախահաշվում նախատեսել գումար արդիականացման ենթակա դոմենային անունների համակարգի (DNS) սերվերների սարքավորումների ձեռքբերման նպատակով:*

Նիստի նախագահող՝

Նիստի քարտուղար՝



Իգոր Սկրտումյան

Քրիստինա Հակոբյան